#2, *փետրվար*, 2019

Կ ա ն թ ե ղ

Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միության թերթ

Սիրելի՛ ընթերցող, մեր երիտասարդների՛ն է վիճակված լինելու համայնքում եւ հասարակության մեջ դրական փոփոխությունների առաջամարտիկները, որովհետեւ նրանց մեջ կա հույս, վստահություն՝ Աստծո, սեփական ուժերի եւ ապագային հանդեպ։ Ձեր երիտասարդներին Աստված օժտել է ստեղծագործելու, զարգանալու, սիրելու անսահման կարողությամբ, որն անպայման դրսեւորվելու եւ աճելու է Երկնքի Արքայության սերմի նման, որի մասին խոսում է մեր Տեր Հիսուս Քրիստոսը։

«Նրանց մի ուրիշ առակ էլ պատմեց եւ ասաց։ «Երկնքի Արքայությունը նման է մանանեխի հատիկի, որը մի մարդ վերցրեց ու սերմանեց իր արտի մեջ։ Այն բոլոր սերմերից ավելի փոքր է, բայց երբ աճում է, բոլոր բույսերից ավելի մեծ է լինում եւ ծառ է դառնում՝ այն աստիճան, որ երկնքի թռչունները գալիս եւ հանգստանում են նրա ճյուղերի վրա», Մտթ. 13, 31-32

Բավրայի երիտասարդները մասնակցեցին «Կամավորների միջազգային օր» միջոցառմանը՝ որպես Հայկական Կարիտասի կամավորներ

«Զրի առաք, ձրի էլ տուէ՛ք։

Մի՛ ունեցէք ոչ ոսկի, ոչ արծաթ եւ ոչ էլ պղինձ դրամ՝ ձեր գոտիների մէջ, ոչ պարկ՝ ճանապարհի համար, ոչ երկու զգեստ, ոչ կոշիկներ եւ ոչ էլ ցուպ, որովհետեւ մշակն արժանի է իր կերակրին»,
Մտթ. 10, 8-10

Դեկտեմբերի 5-ը «Կամավորների միջազգային» օրն էր, որը հաստատվել է ՄԱԿ-ի կողմից՝ 1985թ.։ Առավել ստույգ, այն կոչվում է «Կամավորների միջազգային օր՝ տնտեսական եւ սոցիալական զարգացման համար» եւ նպատակ ունի աշխարհի տարբեր երկրներում գործող կազմակերպություններին, որտեղ աշխատում են կամավորներ, եւ անհատ կամավորներին, հնարավորություն ընձեռել՝ առավել խթանելու կամավորությունը տեղական եւ միջազգային մակարդակներում, կառավարություններին հրավիրել ճանաչելու կամավորության կարեւորությունը՝ երկրների զարգացման համար։ Այլ խոսքով, սա մի օր է, որը կոչված է ուշադրության կենտրոնում պահելու կամավորներին եւ կամավորության գաղափարի կարեւորությունն ընդհանրապես։

«Հայկական Կարիտասը», լինելով քրիստոնեական սկզբունքներով առաջնորդվող կազմակերպություն, մշտապես իր ծրագրերում հնարավորություն է ստեղծում՝ կամավորների լայն ընդգրկման, նաեւ համայնքներում կամավորության խթանման համար։ Հետեւաբար, Կամավորների միջազգային տոնն ամեն տարի նշելը Հայկական Կարիտասի համար կարեւոր է։ Այս տարի տոնը նշելու համար, Գյումրիում հավաքվել էին Հայաստանի տարբեր մարզերում Կարիտասի կողմից իրականացվող ծրագրերում այս կամ այն ձեւով աշխատող եւ ներգրում ունեցած 60 երիտասարդ կամավորականներ։

Այս անգամ մասնակիցների թվում էին նաեւ Բավրա համայնքի Հայ կաթողիկէ երիտասարդական միության տասը անդամներ, ովքեր եւս իրենց ծառայությունն են բերել կազմակերպության համայնքային ծրագրերի իրականացմանը, մասնավորապես, սննդօգնության բաշխման մեջ, «Ծխական հասարակական խորհուրդներ» ծրագրի շրջանակներում մշակելով եւ իրականացնելով համակարգչային հիմնական ծրագրերի դասընթացը։

Միջոցառումը նախաձեռնել էր Հայկական Կարիտասի կամավորականների կորպուսի համակարգող Լիլիթ Մայլամյանը։ Մասնակցում էին կազմակերպության տնօրեն Գագիկ Տարասյանը, Շահերի պաշտպան Քրիստինե Մխիթարյանը, Հոգեւոր խորհրդատու Տ. Հովսեփ Քհն. Գալստյանը, Հասարակական կապերի մասնագետ Արմենուհի Մխոյանը, Էմիլի Արեգակ սոցիալական կենտրոնի տնօրեն Տիգրանուհի Հակոբյանը։

Նախ երիտասարդներին իր շնորհավորանքի խոսքն ուղղեց Գագիկ Տարասյանը՝ կարեւորելով

կամավորների լուրջ ներդրումը կազմակերպության ծրագրերի իրականացման գործում, ինչն իրականություն է արդեն 25 տարի եւ շատ գնահատելի է բոլորի կողմից։ Առանց կամավորների աշխատանքի, շատ ծրագրեր հնարավոր չէր լինի իրականություն դարձնել։

Լիլիթ Մայլամյանը մի քանի կամավորականների խրախուսական նվերներ հանձնեց եւ անկացրեց գիտելիքների մրցույթ։

Տ. Հովսեփ Քհն. Գալստյանը համառոտ խոսեց «Կամավորության քրիստոնեական ընկալումը թեմայով»՝ նախ շեշտելով, որ կարեւոր է ավելի հաճախ ստեղծել այսպիսի միասնական հանդիպումների հնարավորություններ եւ ասաց, որ մտադիր է առաջիկայում առաջարկել դասընթացի ձեւաչափով մի հանդիպում՝ Կարիտասի բոլոր կամավորականների համար՝ ընդգրկելով նաեւ համայնքների երիտասարդներին։ Նա շեշտեց, որ կամավորությունը խթանելու կարեւոր ճանապարհներից մեկը միասնականությունն է եւ փորձառության, ձգտումների կիսումը, փոխադարձ հարստացումը։

«Կամավորության քրիստոնեական իմաստը ճիշտ հասկանալու եւ այն ճիշտ գործադրելու համար մենք պետք է հասկանանք դրա արմատը։ Իսկ արմատը պետք է փնտրել նախ առաջ Ավետարանում, որովհետեւ Քրիստոսն ինքը եղավ առաջին կամավորը, որ ոչ միայն իր ժամանակը, իր կարողությունները, այլեւ իր կյանքը տվեց ամբողջ մարդկության համար՝ դրանով իսկ յուրաքանչյուր մարդ արարածի համար դառնալով կամավոր նվիրումի ամենաառանցքային, բարձրագույն եւ անկրկնելի օրինակը։ Անկրկնելի՝ այն իմաստով, որ յանձին Հիսուս Քրիստոսի, Աստված Ի՛նքը զոհաբերվեց մեզ համար, Աստված իր կյանքը կամովին դրեց զոհասեղանին՝ մարդու համար, եւ դառան պես մորթվեց, որպեսզի մարդուն ազատագրի մեղքի կապանքներից, բոլոր սահմանափակումներից եւ տա կամավոր նվիրումի գերագույն այնպիսի մի օրինակ, ինչպիսին չէր կարող տալ ոչ մի մարդկային արարած։ Քրիստոսի օրինակի լույսի ներքո «կամավորություն» հասկացությունը քրիստոնյայի համար նույնական է դառնում «կատարյալ նվիրում», «ինքնազոհաբերություն» եւ «սեր» հասկացություններին, որոնք Քրիստոսի Անձի, կերպարի մեջ նույն իմաստն ունեն եւ արտահայտվում են նույն կերպ։ Այս իմաստով քրիստոնյաներիս համար լինել կամավոր՝ նշանակում է նախեւառաջ նմանվել Քրիստոսին, ունենալ անձական երկխոսության, մտերմության փորձառություն՝ Հիսուս Քրիստոսի հետ։ Առանց այսպիսի փորձառության, «կամավորության» մեր ընկալումը կլինի հիմքից կտրված եւ, ըստ էության, աննպատակ»։բացատրեց Տ. Հովսեփը։

Քահանան երիտասարդներին հարց ուղղեց՝ մտածելու սեփական կամավորական աշխատանքի պատճառի եւ նպատակի մասին, լսեց մի քանի պատասխաններ եւ խոսքն ամփոփեց Մայր Թերեզայի խոսքերով.

«Տո՛ւր աշխարհին քո ունեցած ամենալավը, եւ մարդիկ կփշրեն քո ատամները, բայց տո՛ւր աշխարհին քո ունեցած ամենալավը ամեն դեպքում»։

Միջոցառման երկրորդ հատվածը տոնական, ժամանցային տրամադրությամբ լեցուն էր՝ համերգային ծրագրով եւ միասնական ճաշով, թխվածքաբլիթով։

Սուրբ Ծննդյան տոնական բեմադրությունը

«Նա, ով պահում է աշխարհը, դրվեց մսուրի մեջ, Աստծո Խոսքը եղավ մի անխոս Մանուկ։ Նրան, ում Երկինքը չի տեղավորում, կինը կրեց իր կրծքի տակ։ Կույսը իշխեց մեր Թագավորին, Կույսը կրեց Նրան, ում մեջ մենք գոյություն ունենք, Կույսը կերակրեց Նրան, ով մեր Հացն է։ Օ՜ անկհայտ թուլությո՛ւն եւ հրաշալի խոնարհություն, Ում մեջ քողարկվեց ամբողջ Աստվածությունը...Թող Նա, ով չարհամարհեց մեր փոքրությունը, կատարյալ դարձնի իր գործը մեր մեջ, եւ թող Նա, ով կամեցավ մեր միջոցով դառնալ Մարդու Որդի, մեզ դարձնի Աստծո որդիներ», Օգոստինոս, քարոզ 184։

Սուրբ Ծննդյան տոնի առթիվ, 2019թ. դեկտեմբերի 24-ին, Ճրագալույցի Սուրբ Պատարագից հետո Բավրայի երիտասարդական միությունը համայնքային կենտրոնի երիտասարդական սրահում բեմադրեց մի սցենար, որը կոչեցինք «Սուրբ Ծննդյան հրաշք՝ Սաթենիկի համար»։ Պատմվում է այն մասին, որ Սաթենիկ անունով մի աղջիկ ապրում է սոցիալական բարդ պայմաններում, ծնողները անդընդհատ վիճում են այդ պատճառով, իսկ Սաթենիկն աղոթում է Սուրբ Կույսին եւ օգնություն խնդրում, ապա գտնում է Հիսուս Մանկան մի կոտրված արձանիկ եւ որոշում Հիսուս Մանկան մսուրը պատրաստել հյուսասենյակում, մի սովորություն, որ մոռացվել էր իրենց տանը։ Սաթենիկն աղոթում է եւ խնդրում, որ իրենց ընտանիքում խաղաղություն տիրի։ Ի վերջո, Հիսուս Մանուկը կատարում է Սաթենիկի համար մի գեղեցիկ հրաշք։

Սուրբ Ծննդյան հրաշք՝ Սաթենիկի համար

Սցենար

Հեղինակ.

Ողջո՛ւյն սիրելի հանդիսատես, մենք ուզում ենք ձեր ուշադրությանը ներկայացնել մի բեմադրություն՝ մեր իրականության մասին, որտեղ նկարագրում ենք մի աղջկա պատմություն, որի ընտանիքն ապրում է սոցիալական բարդ պայմաններում, որտեղ, թվում է, թե չկա հույս, չկա վստահություն՝ ապագայի նկատմամբ, այլ կա միայն ծանր, քիչ վարձատրվող աշխատանք, մարդկային լարված հարաբերություններ, վեճեր։ Մենք ուզում ենք ցույց տալ, որ այսպիսի պայմաններում եւս հնարավոր են հրաշքներ եւ, մանավանդ, Սուրբ Ծննդյան հրաշքներ։

Պատկեր 1

Վեճ՝ ծնողների միջեւ

Մի սենյակ է, որտեղ ծնողները նստած են սեղանի շուրջ եւ վիճում են միմյանց հետ։

Մայրը.

–Մինչեւ ե՞րբ է այսպես շարունակվելու, մինչեւ ե՞րբ, ախր հասկացի՛ր, չի կարելի, հա՛, գիտեմ, չես կարողանում, դժվար է, ա՛խ այդ հիվանդությունը… բայց մի՛ մոռացիր մեր աղջկան, մեր Սաթենիկին, խեղճն ամբողջ օրը դասերն է սովորում եւ նորմալ չի սնվում, չնայած ուտելու բան պիտի լինի, որ ուտի, նրա մանկությունը մեր ամենօրյա կռիվների ու վեճերի մեջ է անցնում… Շուտով Սուրբ Ծնունդ է, գոնե այս տարի կարողանանք մի նվեր գնել նրա համար:

Հայրը.

–Էլի՛ նույն պատմությունը, Էլիզա՛: Ի՞նչ, ի՞նչ ես ուզում, կհասկանաս երբեւէ՝ չեմ կարող երկար աշխատել, լավ վճարող էլ չկա, ինչքան ուզում ես լավ նվագի, դու դա ինձանից լավ գիտես: Համ էլ դու ինձնից շատ ես գումար վաստակում, հազիվ կարողանում ենք տան վարձն ու կոմունալները մուծել, մենք հացի փող չունենք, իսկ դու նվեր ես ուզում, ի՛նչ նվեր, ո՛չ մի նվեր, վաղն էլ կասես ամանորյա սեղան, խոզի բուդ, Ձմեռ պապ, Ձյունանուշ, ամանորյա ճամփորդություն, ահաաա, հոգնել եմ արդեն էս հեքիաթներից, վե՛րջ:

–Էդուա՛րդ, ես հասկանում եմ, որ դժվար է քեզ համար, հա՛, մենք երկուսս էլ առողջական խնդիրներ ունենք, ինձ համար էլ է դժվար, ոտքերս… ի տարբերություն քեզ, հարգելի՛ս, ես ամեն հնարավոր քայլի դիմում եմ, բայց հասկացի՛ր վերջապես, երկու օրը մեկ աշխատելը քիչ է մեզ համար, մեզ գումար է պետք, գոնե այս խղճուկ տնակից դուրս գալու համար:

–Վա՛յ դե զզվացրիր արդեն, տուն մտած-չմտած սկսե՛ց, ամեն օր նույն բանը, հասկացա՛նք էլի, էդքան մտահոգվում ես հա՞, դե ինքդ էլ աշխատիր, գիշերները տուն մի արի, մուրացկանություն արա, չգիտեմ, դա արդեն քո գործն է, իսկ հիմա գնա՛, թո՛ղ քնեմ:

–Վե՛ր կաց մի հատ էդ դիվանից, ուրիշ գործ չունես չէ՞, Մեծն Էդգար, վե՛ր կաց, գնանք աշխատանքի, իմ աշխատավայրում բանվորի թափուր աշխատատեղեր կան մի քիչ բարձր աշխատավարձով, փա՛ռք Աստծո, կարողացա համոզել տնօրենին քեզ համար:

–Երանի չէր լսեի, էդ էր մնացել պակաս, որ էդոյի կնիկը էդոյի համար գործ գտնի, պահ պահ պահ, մի սրան նայեք, ի՛նքը, իրա արա՛ծը, խայտառակ ենք լինելու, ես գիտեմ:

–Դու մեր էրեխու մասին մտածի, էս տարի էլ առանց նվեր, առանց անակնկալ, փոխարենը, ինչպես միշտ, կռիվներ, վեճեր, ու ամեն օր…

–Աղջի՛կ ջան, դու չե՞ս հասկանում թե չե՞ս ուզում հասկանալ, քանի անգամ պիտի ասեմ, վա՛յ, եթե մի ավելորդ բառ էլ լսեցի…

–Ի՞նչ, ի՞նչ ես անելու, խփելու՞ ես, թե խփի, ու՞մ ես սպասում…

–Էլիզա՛…

Պատկեր 2,

Սաթենիկը

Սենյակում նստած է նրանց աղջիկը՝ Սաթենիկը, ցրտից դողացող ոտքերի վրա դրված էր Աստվածամոր եւ Հիսուս Քրիստոսի բավական մեծ, բայց միեւնույն ժամանակ հնամաշ նկարը, որի վրա կաթիլ-կաթիլ թափվում էին նրա արցունքները։ Նա ձեռքերով փակել է իր ականջները, որ ոչինչ չլսի։ Դեմքը լարված է եւ տխուր։

Հեղինակ.

Կողքի սենյակում միայնակ, տխուր ու լուռ, մի գորշ անկյունում նստած էր նրանց յոթնամյա աղջնակը՝ Սաթենիկը, նա ոչինչ չէր ուզում լսել, հոգնել էր ամեն օր լսել, թե ինչպես են վիճում իր ծնողները։ Նա նույնիսկ չէր ուզում մտնել հյուրասենյակ ու տաքանալ, իսկ իր սենյակում շատ ցուրտ էր։ Նա պարզապես չգիտեր՝ ինչ անել, լավագույն բանը, որ կարող էր, աղոթելն էր։

Սաթենիկ.

–Սուրբ Կու՛յս, ես ամեն օր աղոթում եմ, ամեն ժամ, Վարդարան եմ աղոթում, բայց Դու, Դու երեւի ինձ չես լսում, կամ էլ, չես ուզում լսել: Ես հավատում եմ Քեզ, գիտեմ, որ մի գեղեցիկ օր լսելու ես ինձ, կատարելու ես խնդրանքս... Ծնողներս ամեն օր վիճում են, շատ հաճախ նաեւ իմ պատճառով, խնդրում եմ Քեզ եւս մի անգամ՝ բուժի՛ր նրանց, լավ աշխատանք տուր նրանց, խաղաղեցրու՛ նրանց հոգիները եւ այնպե՛ս արա, որ չվիճեն, ես վախենում եմ... չեմ ուզում ծնողներիս ամեն օր այսպես տեսնել, գիտես՝ նրանք շատ լավն են, բարի, չա՛տ եմ սիրում նրանց, խնդրում եմ, հուշի՛ր ինձ, թե ինչպես վարվեմ, օգնի՛ր ինձ, ես վստահում եմ Քեզ...

–Հայր մեր...

–Ողջույն քեզ, Մարիամ...

Միգուցե, նրանց հետ միասին, նրանցից թաքուն ե՞ս էլ աշխատեմ, ծնողներս ամեն ինչ անում են ինձ համար, ես էլ պետք է նրանց օգնեմ, այո՛, այդպես ավելի լավ կլինի: Ի՞նչ անել, կամ մի բան վաճառեմ իմ հին խաղալիքներից։

Սաթենիկը սկսում է բացել իր սենյակի դարակները եւ փնտրել խաղալիքներ։ Հանկարծ, դարակը բացելով, տեսնում է մսուրի մեջ դրված Հիսուս մանկան կոտրված արձանիկը, վերցնում է ձեռքը, երկար նայում՝ տեղում քարացած, հետո գրկում է, սեղմում կրծքին եւ ուրախանում։ Ապա, տեսնելով, որ հյուսասենյակում ոչ ոք չկա, մտնում է եւ Հիսուս մանկան արձանիկը դնում է պատուհանագոգին՝ մի տեսանելի տեղ, մսուրի մէջ, համբուրում է արձանիկը, ծունկի է գալիս եւ աղոթում բարձրաձայն։

Սաթենիկ.

–Սիրելի՛ Հիսուս, քո այս արձանիկը կոտրված է, բայց ես այն շատ եմ սիրում։ Հիշում եմ, որ մի անգամ հարեւանի տղան անզգուշությամբ կոտրեց այն, ես շատ լաց եղա, բայց հայրիկս կպցրեց քո արձանիկը եւ տվեց ինձ, հիշու՛մ եմ, որ գրկեցի եւ համբուրեցի քեզ՝ կարոտած։ Ես գիտեի, որ դու ուրախ ես, որ մենք քո արձանիկը սարքեցինք։ Երբ այն դնում էինք տոնածառ տակ, այդ տարին լավ էր սկսվում, մի հայրիկն ու մայրիկը չէին վիճում գոնե Սուրբ Ծննդյան եւ Ամանորի օրերին, եւ ես վստահ էի, որ Դու ես օգնում նրանց, որ չվիճեն։ Հետո, երբ մեր տոնածառը կոտրվեց, քո այս փոքրիկ արձանիկն այլեւս չէին դնում հյուրասենյակում։ Ես ուզում եմ, որ դու այստեղ լինես այս Սուրբ Ծննդյան տոնին, որ կլինի վաղը երեկոյան, ես քեզ չա՛տ եմ խնդրում, իմ Հիսու՛ս, այնպես արա՛, որ ծնողներս չվիճեն մեր աղքատության, աշխատավարձի կամ իմ նվերի պատճառով։ Իմ ամենամեծ նվերն այս Սուրբ Ծննդյանը կլինի նրանց ուրախ եւ խաղաղ տեսնելը։ Խնդրում եմ, այնպես արա՛, որ գոնե վաղը երեկոյան, մեր տանը ուրախ լինի եւ իմ ընկերները, մեր հին բարեկամները գան մեր տուն։ Խնդրու՛մ եմ, մի հրաշք կատարիր, ես հավատում եմ, որ դու կարող ես դա անել, իմ սիրելի՛ Հիսուս։ Սուրբ Կու՛յս, դու էլ, խնդրում եմ, օգնի՛ր ինձ եւ խնդրիր քո Որդուն։ Սուրբ Հովսե՛փ, դու էլ օգնիր, խնդրում եմ։

Սաթենիկը դարձյալ համբուրում է Հիսուսի արձանիկը, թողնում է այն պատուհանագոգին եւ գնում սենյակից։

Պատկեր 3

Հույս

Հեղինակ.

Դեկտեմբերի 24-ն էր՝ Սուրբ Ծնդյան նախօրեն, երեկո էր, մութն ընկնելու վրա էր, դրսում սառնամանիք։ Սաթենիկը չէր ուզում տուն գնալ, այլ քայլում էր այգու ծառուղում։ Փչում էր սառը քամին, որ գետնից սրբում էր սառած ձյունը եւ խփում աղջկա արտասվախառն դեմքին։ Նրա մատները արագ-արագ շարժվում էին Վարդարանի հատիկների վրայով, իսկ

չուրթերը անդադար աղոթք էին չչնջում։ Սաթենիկը հանկարծ վեր նայեց ու աստղազարդ սառը երկնքում տեսավ մի մեծ չողչողուն աստղ եւ իր համար անհասկանալի պատճառով շատ ուրախացավ։

Երկինքը եւ աստղը երեւում են պատին՝ պռոյեկտորով։ Սաթենիկը քարացած՝ նայում է աստղին։

Նա հանկարծ ինչ-որ բան հիշեց ու քայլերն ուղղեց դեպի տուն։

Իր սենյակ մտնելով՝ նա իր դարակից վերցնում է Աստվածաշունչը եւ սկսում ընթերցել բարձրաձայն.

Սաթենիկ.

«Եվ ահա այն աստղը, որը տեսել էին արեւելքում, առաջնորդեց նրանց, մինչեւ որ եկավ ու կանգ առավ այն տեղի վրա, ուր մանուկն էր։ Աստղը տեսելուն պես՝ չափազանց մեծ ուրախություն ապրեցին»։

Աղջիկը ուրախ-ուրախ վազում է դեպի հյուրասենյակ՝ Հիսուս մանկան արձանիկի մոտ, բայց տան դուռը հանկարծ բացվում է եւ ուրախ-ուրախ զրուցելով, թեւանցուկ ներս են մտնում ծնողները՝ ձեռքներին մթերքի տոպրակներ։ Սաթենիկը զարմանքից քար է կտրում եւ ապշած նայում է ծնողներին, որոնք հասկանում են նրա ուրախության պատճառը եւ մեղմ ժպտալով՝ գրկում են Սաթենիկին։

Մայրը.

-Արի՛ աղջիկս, օգնի՛ր մեզ սեղանը պատրաստել Սուրբ Ծննդյան տոնի համար։ Մենք այսօր շա՜տ գեղեցիկ սեղան ենք պատրաստելու եւ շատ ուրախանալու ենք։ Ես լիահույս եմ, որ այս եկող տարին մեզ համար ավելի լավն է լինելու, այսօր ես ու հայրդ միասին աղոթել ենք այդ նպատակով։ Աստված մեզ չի թողնի մենակ։ Քո հավատն է, որ մեզ փրկում է ամեն անգամ։

Սաթենիկը, մոտենալով պատուհանագոգին դրված Հիսուս մանկան արձանիկին, համբուրում է այն եւ ասում է.

-Շնորհակալ եմ, իմ սիրելի՛ Հիսուս։

Պատկեր 4

Նոր սկիզբ

Սուրբ Ծննդյան տոնական փոքրիկ սեղանը պատրաստ է, Սաթենիկի ընտանիքը հյուրընկալում է ծնողների ընկերներին, Սաթենիկի դասընկերներին, ուրախ զրուցում են։ Հիսուս մանկան արձանիկը դրված է տոնածառի տակ։

Սաթենիկը՝ շատ ուրախ եւ արագ այս ու այն կողմ թռչկոտելով.

-Համեցե՛ք, համեցե՛ք, մենք վաղուց սպասում ենք ձեզ, մաման ու պապան էլ տանն են, համեցե՛ք։

Մտնողները ուրախ են, բարեւում են Սաթենիկին, Էդուարդին եւ Էլիզային, հարցնում՝ ինչպե՞ս են եւ տեղավորվում են սեղանի շուրջ։

Սոնա՝ Էդուարդի ընկերոջ կինը.

-Գիտե՞ք, Սուրբ Ծննդյան տոնն ինձ համար միշտ առանձնահատուկ նշանակություն ունի. ինչքան էլ զբաղված լինեմ, անպայման այսօր՝ նախօրեի երեկոյան, գնում եմ եկեղեցի եւ ներկա լինում Սուրբ Պատարագին։ Ընտանիքով ենք գնում, ինչպես ամեն կիրակի։ Ինձ համար Սուրբ Պատարագին մասնակցելը պարտադիր է, ուզում եմ երեխաներս էլ այդպես վարժվեն, որովհետեւ առանց Սուրբ Հաղորդության քրիստոնյայի կյանքը կիսատ է եւ անիմաստ։ Ես շա՜տ հաճախ եմ նկատում Աստծո օրհնություններն իմ

ընտանիքում, երբ դժվարություններ ենք ունենում, ես միշտ աղոթում եմ, եւ Աստված ինձ լսում է։

Աննա՝ Էլիզայի ընկերուհին.

-Մեր տանն այդ սովորությունը դեռ չունենք Սոնա ջան։ Մենք հին՝ կոմունիստական դաստիարակությամբ ընտանիքների սերունդ ենք, մեր մեջ փոքրուց ամեն ջան թափել են արմատախիլ անելու աղոթքի սովորությունը։ Թեեւ տատս շատ էր աղոթում, եւ երբ փոքր էի, ինձ սովորեցնում էր աղոթել «Հայր Մերը, Ողջույն»-ը։ Իսկ դպրոցում սովորեցնում էին, որ ամենաճիշտը բնական գիտություններն են, Չարլզ Դարվինի տեսությունը, թե մարդն առաջացել է կապիկից, եւ թե ոչ մի հրաշք էլ հնարավոր չէ, որ Աստված գոյություն չունի։ Ի դեպ, Էլիզա, դուք հավատում ե՞ք հրաշքների գոյությանը։

Արմինե՝ Աննայի դուստրը

-Մայրի՛կ, ես հավատում եմ հրաշքների գոյությանը, ես Սաթենիկի հետ միասին ամեն կիրակի եկեղեցում եմ, շատ եմ սիրում լսել Աստծո մասին եւ կարդալ Աստվածաշունչ։ Ես հավատում եմ, որ Աստված միշտ կարող է հրաշքներ գործել, բայց նրանք, ովքեր չեն հավատում, չեն կարող այդ հրաշքները տեսնել։

Աղջկա մայրը եւ հայրը ծիծաղում են։

Աննա.

-Մեր երեխաները մեզնից ավելի հավատքով են, մենք երեւի դադարել ենք այլեւս հավատալ նման բաների, միգուցե, մեր հոգսե՛րը չեն թողնում մեզ հավատալ, ոչ թե մեր դաստիարակությունը։ Ախր ինչպե՞ս գնամ եկեղեցի, ո՞վ պիտի անի իմ տան գործերը, ես մենք չաշխատենք, միթե՞ երկնքից կտրվի մեզ ուտելիք, կամ հագուստ։

Արմինե.

-Հիսուսը մեզ սովորեցնում է, որ չպետք է մտահոգվենք այն մասին, թե ինչ պիտի ուտենք, ինչ պիտի խմենք կամ ինչ պիտի հագնենք, որովհետեւ Աստված գիտի, թե մեզ ինչ է պետք՝ նախքան, որ մենք Իրենից մի բան խնդրենք։ Մենք պետք է մտածենք ավելի կարեւոր բաների մասին, ինչպես օրինակ՝ Սուրբ Ծնունդը եւ Աստծո հրաշքները։

Արմինեի հայրը.

-Տեսնու՞մ եք, ինչ խելացի են մեր երեխաները, մեզանից արդեն բան դուրս չի գա, այնքան ենք տարված մեր չեղած աշխատանքով, մեր առօրյայով, որ մոռացել ենք ամեն ինչ՝ Աստծուն էլ, եկեղեցին էլ, Սուրբ Ծնունդն էլ։ Ես միշտ ասել եմ՝ մեր երեխաները կփոխեն մեր երկրի ապագան, այս երեխաների մեջ հույս ու հավատք կա։

Արմինե.

-Պա՛պ, մենք ձեզանից ենք սովորում, դուք էլ իրականում՝ ձեր սրտի խորքում հավատում եք հրաշքներին, ուղղակի ամաչում եք բարձրաձայն ասել այդ մասին։ Իսկ մենք չենք ամաչում։

Էդուա՛րդ.

-Երեւի, մենք մի քիչ էլ ամաչում ենք անկեղծ լինել միմյանց հետ, մենք սովորել ենք մեզ շրջապատող աշխարհի կեղծիքին եւ գորշ գույներին, մեր հոգսերը մեզ կուլ են տվել, մենք թույլ ենք տալիս, որ աշխարհը մեզ կուլ տա, մի գուցե, մեր երեխաները մեզնից ավելի ուժե՞ղ են եւ կարող են ապրել ավելի համարձակ։

Մայրը՝ Էլիզան՝ դիմելով բոլորին

-Գիտե՞ք, ես մի հրաշք եմ ուզում պատմել. Էդուարդին այսօր առաջարկել են նվագել սիմֆոնիկ նվագախմբում։ Ճիշտ է՝ աշխատավարձը շատ բարձր չէ, բայց կայուն է եւ աշխատանքային զարգացման մեծ հեռանկար կա, ճի՞շտ է, Էդուա՛րդ։

Էդուարդ.

-Այո՛, Էլիզա, դու շատ ճիշտ ասացիր, սա մի իրական հրաշք է, անհավատալի մի բան՝ այսքան երկար ժամանակ նորմալ աշխատանք փնտրելուց հետո։ Ինձ համար էլ հաճելի է նվագել ավելի մեծաթիվ եւ կիրթ հանդիսատեսի առջեւ։ Սաթենիկս դու ուրա՞խ ես։

Սաթենիկ.

–Այո՛, իհարկէ, պա՛պ, եթէ դա քեզ համար լաւ է, առողջութեանդ չի վնասի եւ հանգիստ կլինես, իհարկէ, ուրախ եմ։ Մայրի՛կ, այդպէս, աւելի լաւ է, չէ՞։

Էլիզա.

–Իհարկէ, անուշիկս, գոնե քեզ համար մյուս Սուրբ Ծննդյան համար կկարողանք մի փոքրիկ նվեր պատրաստել։

Սաթենիկ.

–Իմ ամենաթանկարժեք նվերը ձեզ ժպտալով տեսնելն է, մայրիկ, ինձ ոչ մի ուրիշ բան հարկավոր չէ։ Ինձ համար Հիսուս մանուկն այս տարի մի գեղեցիկ հրաշք գործեց, սա՛ է իմ Սուրբ Ծննդյան հրաշքը։

Սաթենիկն իր հայացքը քնքշությամբ դարձրեց դեպի Հիսուս Մանկան արձանիկը, իսկ հայրիկը ձեռքն առավ իր հին ջութակը սկսեց նվագել «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» ստեղծագործությունը եւ միասին սկսում երգել։ Միացնում ենք ձայնագրությունը։

Վերջ

Սցենարի հեղինակներ՝
Վեներա Պետրոսյան,
Տ. Հովսեփ Քհն. Գալստյան,
2019թ.

Բարեգործական տոնավաճառ, Սուրբ Նիկողայոսի նվերները

Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միության հետ միասին դեկտեմբերի 28-ի երեկոյան բարեգործական արշավ եւ տոնավաճառ կազմակերպեցինք գյուղի խանութի դիմաց։ Երիտասարդները խանութի հաճախորդներից գումար կամ սնունդ էին խնդրում՝ անապահով ընտանիքներին օգնելու համար, նաեւ վաճառում կամ նվիրատվության դիմաց նվիրում էին իրենց ձեռքով պատրաստած տոնական սեղանի եւ տոնածառի զարդարանքներ։ Բարյացակամ հաճախորդները ստանում էին նաեւ քահանայիս օրհնության աղոթքը։ Թեեւ ցուրտ էր, բայց խարույկը եւ եղբայրասիրությունը ջերմացնում էին մեր սրտերը։ Երիտասարդների ջանքերով եւ

մարդկանց բարեսրտության շնորհիվ մի փոքրիկ գումար հավաքվեց, որով գեղեցիկ խաղալիքներ գնեցինք անապահով երեք ընտանիքների երեխաների համար։
Դեկտեմբերի 31-ին երիտասարդների հետ մի փոքրիկ թափոր կազմակերպեցինք գյուղում՝ աղոթքով, երգեցողությամբ, Սուրբ Նիկողայոսի (Santa Claus) հագուստներով եւ նվերներով

այցելեցինք մեր ընտրած երեք ընտանիքներին, բաժանեցինք երեխաներին, որ շատ ուրախացան եւ զարմացան՝ տեսնելով իրենց քահանային եւ երիտասարդներից մեկին՝ Սուրբ Նիկողայոսի գլխարկով եւ հագուստով։ Նաեւ կատարեցինք տնօրհնեքի կարգ, երգեցինք «Խորհուրդ մեծ» շարականը եւ շնորհավորեցինք Սուրբ Ծննդյան եւ Ամանորի տոները։

Տ. Հովսեփ Գալստյան

Տեառնընդառաջ. միասին մոտենա՛նք Տիրոջը

Փետրվարի 2-ին Հայ Կաթողիկէ Եկեղեցին տոնում է Տեառնընդառաջի տոնը՝ քառասնօրյա Հիսուս Մանկան՝ տաճարին ընծայաբերման տոնը։ Հայ Կաթողիկէ Եկեղեցին Հիսուսի քառասուն օրերը հաշվում է դեկտեմբերի 25-ից՝ Հիսուսի Սուրբ Ծնունդից, այդ պատճառով էլ Տեառնընդառաջը տոնում է փետրվարի 2-ին։

Տեառնընդառաջի տոնական Սուրբ Պատարագը մատուցվեց Սուրբ Նշան եկեղեցում սովորականի նման՝ ժամը 12։00-ին՝ ձեռամբ Տ. Հովսեփ Քհն. Գալստյանի։ Նա իր քարոզում ասաց հետեւյալը.

Քարոզ

««Այսօր անըսկզբնական ծնունդ հայրական ծոցի Բանն եկաւորեալ ի տաճարն. ընծայէ զարարածս Հօր ի յերկինս...Այսօր եւ մեք հաւատացեալքս ընդ ծերունւոյն Սիմէոնի. ըզԲանն համագոյ Հօր եւ Սուրբ Հոգւոյն օրհնաբանեսցու՛ք».

Տեառնընդառաջ, Գիշերային ժամերգություն, «Օրհնության ԴՁ» շարական

Սիրելինե՛ր, այսօր հայ շարականագիրը յուրաքանչյուրիս հրավիրում է Սիմեոն ծերունու հետ միասին օրհնաբանել Հիսուս Մանկանը, որ Աստծո Խոսքն է՝ մարդկային մարմին առած եւ հայրական ծոցից անսկզբնապես ծնված, որ եկել է տաճար Ինքն Իրեն եւ իր հետ միասին մեզ բոլորիս եւ Աստծո ստեղծած բոլոր արարածներին ընծայելու Երկնավոր Հօրը։ Քառասնօրյա Հիսուս Մանուկն իր ծնողների եւ Սիմեոն ծերունու ձեռքերով ընծայվեց Հայր Աստծուն, որպես սուրբ զոհ, անդրանիկ ծնունդ, ըստ Աստծո Օրենքի, որպեսզի Ինքն էլ իր սրբազան ժամին իր սուրբ զոհաբերությամբ ամբողջ մարդկությունը բարձրացնի դեպի Երկինք։ Շարականի այս տողերը մեզ հրավիրում են անդրադառնալ փրկագործության խորհրդին, որը նպատակն է Հիսուս Մանկան Հայտնության եւ Աստծո տաճար մտնելուն։ Նա, որպես ընծայաբերվող անդրանիկ զավակ, կոչվեց «սուրբը», ըստ Գաբրիել հրեշտակապետի ավետման եւ, որպես պարտադիր ընծա, մատուցվեց Տիրոջը, որպեսզի մեզ դարձնի իր եղբայրներն ու քույրերը, լինի անդրանիկը՝ Իր շնորհիվ փրկված եղբայրների մեջ, ըստ Սուրբ Գրքի։

Որպեսզի յուրաքանչյուր մարդ արարած ճշմարտապես դառնա եղբայրը Քրիստոսի, կարիք ունի Սիմեոն ծերունու նման այսօր եւ միշտ աննկարագրելի կարոտով, փափագով եւ սիրով սպասելու Հիսուս Մանկան հետ հանդիպմանը եւ իր գիրկը լայնորեն բացելու՝ Հիսուս մանկան առջեւ, գրկելու նրան անհու՛ն կարոտով եւ քնքշությամբ եւ Սիմեոն ծերունու նման բացականչել. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր քո ծառային, որովհետեւ աչքերս տեսան փրկությունը քո»։ Անսահման բերկրանք եւ ներքին ցնծություն ապրեց այս ծերունին, որ Իսրայելի ամբողջ ժողովրդի եւ աշխարհի բոլոր ժողովուրդների հավաքական կերպարն է՝ իր ալեհեր կյանքի ճանապարհով, որ խորհրդանշում է ամբողջ մարդկության պատմությունը, իմաստուն մարդկության պատմությունը, որ ճանաչում է Արարչին եւ սպասում է փրկության, գիտակից, սխալների, մեղքերի միջով անցած, չարն ու բարին ճաշակած մարդկության պատմությունն է։ Այդպիսի մարդկային պատմություն ունենք յուրաքանչյուրս, ովքեր կարոտով ենք սպասում Տեր Հիսուս Քրիստոսի հետ հանդիպման, մանավանդ, Սուրբ Հաղորդության մեջ, Տիրոջ Զոհաբերության Սուրբ ժամին, երբ բոլորս Հիսուսի հետ միասին դառնում ենք մի սուրբ ընծա եւ այդպես նվիրաբերվում Տիրոջը։ Սա՛ է

նշանակում գնալ Տիրոջն ընդառաջ եւ բարձրացվել Երկինք:

Եկէ՛ք այսօր Սիմեոն ծերունու նման գրկենք Հիսուս Մանկանը եւ մեր ձեռքերում զգանք նրա ջերմությունը, որ աստվածային սիրո ջերմությունն է, զգանք այդ սուրբ Մանկան լույսը, որ թափանցում է մեր սրտերից ներս եւ լուսավորում մեր ամբողջ էությունը՝ սկսելով մեր տեսողությունից։ Այդ լույսը սրբում է մեր ամբողջ էությունը, եթե զղջում ենք եւ պատրաստ ենք ապաշխարության, ապա այդ լույսը սրբագործում է մեր անցյալը, մեղքի ու Աստծո հանդեպ անտարբերության մեր անձնական եւ հավաքական պատմությունը, որ ինքներս ենք գրել՝ չարի թելադրանքով»։

Նույն օրը՝ երեկոյան 18։00-ին, համայնքային կենտրոնի մոտ կատարվեց Տիրոջ լույսը խորհրդանշող խարույկը վառելու եւ Անդաստանօրհնեքի արարողությունները։ Քահանան պրհնեց աշխարհի չորս կողմերը, գյուղը, դաշտերը, հավատացյալներին, ըստ կարգի։

«Աստծո Խոսքի կիրակին»

Քեզ չափազանց մոտիկ է այդ խոսքը· քո բերանում եւ քո սրտում է, եւ քեզանից է կախված դա կատարելը»· Բ Օր· 30, 11-14։

Հունվարի 26-ին Բավրայում տոնեցինք «Աստծո Խոսքի կիրակին», որ հաստատվել է Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետի նախաձեռնությամբ՝ «Aperuit illis»՝ «Նա բացում է», վերտառությամբ նամակով, 2019թ· սեպտեմբերի 30-ին։ Սուրբ Պատարագը մատուցվեց Աստծո Խոսքի տարածման դիտավորությամբ, խոսեցինք Աստծո Խոսքի մասին եւ Աստվածաշունչ ընթերցելու կարեւորության մասին՝ հավատացյալներին կոչ անելով ամեն օր ընթերցել Սուրբ Գիրք եւ աղոթել՝ Սուրբ Գրքի տողերի շուրջ խորհրդածելով։ Սուրբ Պատարագներից հետո նաեւ միասնական հատուկ աղոթք բարձրացրեցինք առ Աստված՝ Աստծո Խոսքի տարածման համար։ Երիտասարդների եւ պատանիների հետ հանդիպումների ժամանակ նրանց ուշադրությունը հրավիրեցինք Աստվածաշնչի վրա եւ կազմակերպեցքին Ավետարանի հատվածի քննարկում։

Քարոզ

Այս կիրակին Նորին Սրբութիւն Ֆրանցիսկոս Քահանայապետի կողմից Կաթողիկէ Եկեղեցում հռչակվել է որպես «Աստծո Խոսքի կիրակի»։ Նպատակը մեկն է՝ Աստծո ժողովրդի ուշադրությունը նորովի հրավիրել Աստծո Խոսքի, հատկապես, Աստվածաշնչի վրա։ Այսօր Տիրոջ Ընդհանրական Եկեղեցին վերստին առիթ ունի նորովի գնահատելու այս մեծ հոգեւոր եւ բարոյական հարստության աղբյուրը, որ մարդու համար կյանքի եւ փրկության միակ գրավականն է։

Հովհաննեսն իր ավետարանը սկսում է հետեւյալ տողերով. «Սկզբից էր Բանը եւ Բանն Աստծո մոտ էր եւ Բանն Աստված էր...ամեն ինչ նրանով եղավ եւ առանց նրա չեղավ ոչինչ, որ եղել է։ Կյանքը նրանով էր եւ այդ կյանքը մարդկանց համար լույս էր», Հվհ. 1, 1-4։ «Բան» գրաբարյան հայերենով նշանակում է՝ «խոսք», այսինքն՝ Աստծո Խոսքը, որ Աստված Ինքն է, եղավ եւ է սկիզբը կյանքի, «ամեն ինչ նրանով եղավ». Ծննդոց գրքի սկզբում էլ կարդում ենք, որ Աստված աշխարհը ստեղծեց իր խոսքով. «Աստված ասաց. «Թող լույս լինի եւ լույս եղավ», Ծնն. 1, 3։ Սուրբ Գիրքը մեզ հայտնում է, որ Աստծո խոսքը արարող է, կյանքի սկիզբ է եւ լույս է։ Աստծո խոսքն Աստծո իմաստությունն է եւ Աստծո խոսքը անձ է՝ Աստծո Որդին է՝ Սուրբ Երրորդության երկրորդ անձը, որի միջոցով ստեղծվեց աշխարհը եւ որի միջոցով Աստված Ինքն Իրեն հայտնեց եւ շարունակում է հայտնել մարդկությանը։ Աստված, որ ամբողջովին լույս է եւ սեր, աշխարհը ստեղծեց սիրուց մղված եւ սիրո համար, որպեսզի Ինքն Իրեն եւ Իր մեջ եղած ամբողջ գեղեցկությունն ու հարստությունը հայտնի աշխարհին եւ, հատկապես, մարդուն, որին ստեղծեց Իր պատկերով եւ նմանությամբ։ Եվ Աստված Իր անսպառ հարստությունները մարդուն փոխանցեց իր Խոսքով, որ Իր Որդին է։

Առակների գրքում Աստծո Իմաստությունը խոսում է մեզ հետ. «Լավ է ինձ ստանալ, քան ոսկի եւ անգին քարեր...Ես գնում եմ արդարության ճանապարհներով... որ սիրելիներիս հարստություն բաշխեմ եւ նրանց գանձարանները բարությամբ լցնեմ։ Որպեսզի պատմեմ ձեզ, թե ինչ է լինելու ամեն օր, եւ հիշեցնեմ, թե ինչ է եղել ի սկզբանե։ Տերն ինձ ստեղծեց իր ճանապարհի սկզբին՝ իր գործերի համար, հավիտենությունից էլ առաջ հաստատեց ինձ», Առ. 8, 19-23։ Աստծո Խոսքը կամ Աստծո Որդին աշխարհի սկզբից ի վեր իր անսպառ հարստություններն է բաշխում յուրաքանչյուր մարդ արարածի, ով ձգտում է հարստանալ իրենով, ով ձգտում է Աստծուն եւ աստվածային իմաստությանը, որ ձգտում է ճանաչել Աստծուն եւ սիրել Նրան, կատարել Աստծո կամքը։ Աստծո Որդին է, որ սկզբից մեղքի մեջ ընկած մարդուն ցույց էր տալիս մեղքից փրկվելու ճանապարհը՝ Աստծո Օրենքի եւ մարգարեությունների միջոցով, որպես Աստծո Խոսք, որ Ինքն Իրեն հայտնում է ընտրյալ մարգարների միջոցով Աստծո ժողովրդին։ Աստծո Խոսքը եւ Աստծո հայտնության պատմությունը գրի առնվեց Աստվածաշնչի առաջին գրքերում, որ Հին Կտակարանի գրքերն են։ Աստված իր իմաստությամբ մշտապես ուղեկցում էր իր մոլորյալ ժողովրդին, իմաստություն, որը նախապես հայտնվեց ոչ թե որպես անձ, այլ՝ մարգարեների բերանով եւ նրանց գրվածքներով, որոնք հալածվեցին, անտեսվեցին, սպանվեցին։ Բայց Աստված մնաց հավատարիմ իր սիրուն՝ դեպի անկյալ մարդ արարածը եւ ամբողջ արարչագործությունը։ Նույնիսկ եթե մայրն իր զավակին մոռանա, Աստված մարդուն չի մոռանում երբեք, ինչպես ասում է Սուրբ Գիրքը։ Երբ ժամանակն իր լրումին հասավ,

Աստված իր Իր Միածին Որդուն, որ Իր իմաստությունն է, Իր Խոսքը՝ Բանն Աստծո, ուղարկեց աշխարհ, որպեսզի ծնվեր որպես մարդ, մտներ մարդկային պատմության մեջ, մարդկային կենցաղի մեջ, լիներ ամեն ինչով մարդու նման՝ միայն առանց մեղքի, պարտության մատնելով սատանային՝ արդեն որպես մարդ արտասանելով Աստծո գրի առնված խոսքը· «Գրված է՝ քո Տեր Աստծուն չպիտի փորձես...գրված է՝ ոչ միայն հացով է ապրում մարդ, այլ՝ ամեն խոսքով Աստծո, որ դուրս է գալիս Աստծո բերանից», Մտթ. 4։ Աստծո Խոսքը դարձավ մարդ եւ սկսեց Ինքն Իրեն, որ Աստծու իմաստությունն է, հայտնել մարդկային լեզվով՝ հիշեցնելով եւ իր մարդկային կյանքով արտահայտելով այն ճշմարտությունները, որ նախապես Աստած հայտնել էր մարգարեների բերանով· Ի՜նքն Աստծո Խոսքը եկավ մարդկանց մեջ՝ մարդկանց լեզվով մարդուն բացատրելու, փաստելու, որ հնարավո՛ր է ապրել Աստծո Խոսքի համաձայն եւ կատարել Աստծո կամքը, որովհետեւ դա միա՛կ ճանապարհն է մարդկային կյանքի շարունակության եւ մահվանից փրկվելու, մեղքը հաղթահարելու։ Երբ աշակերտները այսօրվա ավետարանական հատվածում Սամարիայում Հիսուսին առաջարկում են հաց ուտել, նա հրաժարվում է եւ պատասխանում· «Ես ունեմ ուտելու կերակուր, որ դուք չգիտեք...Իմ կերակուրն այն է, որ կատարեմ կամքը նրա, ով ինձ ուղարկել է եւ կատարեմ նրա գործը», Հվհ. 4, 31-34։ Սա՛ է նշանակում ապրել Աստծո Խոսքով, սնվել Աստծո Խոսքով, որովհետեւ Աստծո կամքը կատարե՛լն է այն հոգեւոր հացը, որը մարդու համար ապահովում է փրկություն մեղքից եւ մահվանից։

Հիսուս Քրիստոսը Աստծո Խոսքի հայտնությունն է մարդկանց՝ որպես Անձ, Սուրբ Երրորդության Երկրորդ Անձը։ Մարդիկ չհավատացին եւ չպահեցին Աստծո Խոսքը, որ ասվեց եւ գրի առնվեց մարգարեների միջոցով, ապա եկավ ժամանակը եւ Աստված Իր Խոսքը հայտնեց որպես Անձ, որպես մարդ, որ խոսում է մարդկայնորեն, որ եղբայր է բոլոր մարդկանց, որ ընկերանում եւ ուղեկցում է բոլորին, բուժում է հիվանդներին, քարոզում է փրկության հնարավորությունը՝ Բարի Լուրը, որ կոչում ենք Ավետարան եւ ի վերջո իր կյանքն է տալիս՝ որպես սերմ, ցորենի հատիկ, որից աճեց եւ հաստատվեց Սուրբ Եկեղեցին։ Աստծո Խոսքը մարմին առավ՝ Հիսուս Քրիստոսի Անձի մեջ եւ մեզ մատուցվեց ամենապարզ, հասկանալի կերպով, որպեսզի մենք հասկանանք, թե Աստված մեզ համար միշտ հասանելի է, մեզ համար Ինքն Իրեն պատրաստ է այդքա՛ն խոնարհեցնելու, պարզեցնելու, բացատրվելու, որպեսզի մենք Իրեն հավատալով, Իր Խոսքին հավատալով եւ այն պահելով՝ հասնենք փրկության եւ մասնակից լինենք Իր Աստվածային կյանքին՝ նոր իրականության մեջ, որ կոչվում է Աստծո թագավորություն։

Ուրեմն, Աստծո Խոսքը Հիսուս Քրիստոսն է, որի մասին կարդում ենք Աստվածաշնչի բոլոր գրքերում։ Նրա մասին նախ կարդում ենք Հին Կտակարանի գրքերում՝ առանց անունը իմանալու, որպես Աստծո իմաստություն, Աստծո խոսք, օրենք, Աստծո ընտրյալ, օծյալ, մեսսիա, փրկիչ, գառ, որ պիտի մորթվի բոլորի

փոխարեն, իսկ Նոր Կտակարանում Աստծո Խոսքը հայտնվում է որպես Հիսուս Քրիստոսը, որ Աստծո մարդացյալ Որդին է՝ կատարյալ Աստված եւ կատարյալ մարդ՝ մեկ Անձի մեջ։ Հիսուս Քրիստոսը եկավ մարդուն սովորեցնելու, թե ինչպես պետք է կատարել Աստծո կամքը եւ այդպիսով ընդունել հավիտենական կյանքը, սովորեցրեց նաեւ զոհաբերվել՝ հանուն Աստծո կամքի, նվիրել սեփական անձը, որպեսզի մեր միջոցով կատարվի Աստծո խոսքը եւ կամքը, Ինքն Իր մարդկային կյանքով դարձավ Աստծո Խոսքի կատարման տեսանելի օրինակը եւ առաջինը՝ բազում հոգեւոր եղբայրների եւ քույրերի մեջ, որ կազմում են Իր Սուրբ Եկեղեցին։ Հետեւաբար, առանց Իր օրինակին հետեւելու, առանց Իրենից մշտապես սովորելու, մենք, որ Իր եղբայրներն ու քույրերն ենք կոչված, չենք կարող հասկանալ Աստծո Խոսքը եւ գործադրել այն՝ մեր փրկության համար։

Հիսուսին հասկանալու եւ նրանից սովորելու համար հարկավոր է մեզ համար նախ հարազատ դարձնել Աստվածաշունչը՝ մշտապես, ամեն օր ընթերցելով այն՝ աղոթքով եւ մեծ ուշադրությամբ։ Սուրբ Հերոնիմոսն ասում էր. «Զիմանալ Սուրբ Գիրքը՝ նշանակում է չիմանալ Քրիստոսին» (Սբ. Հերոնիմոս, Եսայու գրքի մեկնություն, նախաբան)։ Այս մասին մեզ հիշեցնում է նաեւ Ֆրանցիսկոս Քահանայապետը իր «Նա բացեց»՝ Aperuit illis կոչվող կոնդակում, որով հաստատեց Աստծո Խոսքին նվիրված կիրակին եւ մեզ հրավիրում է Սուրբ Գրքի յուրաքանչյուր գիրքը ընթերցել ներքին բացվածությամբ, Աստծո Խոսքը որպես ճշմարիտ կերակուր ընդունելու հոգեւոր տրամադրությամբ, որպեսզի Հիսուս մեզ համար բացի Իր խոսքի իմաստներն ու անսպառ հարստությունները։ Քահանայապետը մեզ հիշեցնում է Հայտնության գրքի տողերը (Հյտն. 3, 20), թե «Հիսուս կանգնած է դռան առջեւ եւ թակում է դուռը՝ Սուրբ Գրքի բառերով։ Եթե մեկը լսի Նրա ձայնը եւ բացի դուռը, Նա կմտնի եւ կընթրի նրա հետ...Եթե մենք լսենք նրա ձայնը եւ բացենք մեր մտքի եւ սրտի դռները, Նա կմտնի եւ կմնա մեզ հետ ընդմիշտ»։

Եթե մենք թույլ տանք Հիսուսին ուղեկցել մեզ միշտ, Նա մեզ կսովորեցնի ճիշտ հասկանալ Աստծո Խոսքը, որ գրված է Աստվածաշնչում եւ որ նաեւ մեզ է փոխանցվել Եկեղեցու Սուրբ Հայրերի միջոցով՝ Սրբազան Ավանդությամբ։ Հիսուս իր հարությունից հետո՝ հենց նույն օրը Էմմավուս տանող ճանապարհին երեւաց երկու մարդկանց, ովքեր իրար հետ խոսում էին Հիսուսի խաչելության մասին, բայց չէին հասկացել, թե ինչ էր տեղի ունեցել։ Եվ Հիսուս, անծանոթ մի մարդու տեսքով, ամբողջ ճանապարհին նրանց բացատրեց, թե ինչ էր Իր մասին գրված Աստվածաշնչի մեջ՝ Մովսեսի գրքերում եւ մարգարեություններում եւ թե Իր խաչելությամբ կատարվեցին մարգարեությունները։ Այս ամենը լսելով՝ այդ մարդիկ Նրան խնդրեցին ընթրել իրենց հետ, եւ երբ Հիսուս սեղանի շուրջ հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց, նրանք հասկացան, որ Հիսուս Ի՛նքն էր իրենց ուղեկիցը եւ հյուրը։ Այստեղ ուշադրավ է, որ նրանք հացը կիսելիս հասկացան, թե Հիսուսն էր.մենք տեսնում ենք կապը Աստծո Խոսքի եւ Սուրբ Հաղորդության միջեւ, որովհետեւ հացի օրհնության նույն տեսարանն ունենք նաեւ Վերջին Ընթրիքին, որով Հիսուս հաստատեց Սուրբ Հաղորդությունը եւ մեզ ավանդեց որպես իր Զոհաբերությունը մշտապես վերապրելու, Իր հետ միանալու եւ Աստծո մարմնացյալ Խոսքով կերակրվելու վսեմագույն եւ եզակի մի հնարավորություն եւ որից մենք միշտ կարող ենք օգտվել Սուրբ Պատարագի խորհրդակատարության ժամանակ։ Սուրբ Պատարագին մենք Աստծո Կենդանի Խոսքն ընդունում ենք նախ լսելով Սուրբ Ավետարանը եւ ապա ճաշակելով Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Մարմինն ու Արյունը, հաղորդվելով Նրա հետ։ Այսպիսով մենք հասնում ենք մեր կոչմանը՝ ընդունել Աստծո Խոսքը մեր մեջ եւ միանալ Աստծուն։ Բայց Աստծո Խոսքը եւ Սուրբ Պատարագը մեզ օգնում են նաեւ լինել միասնական եւ կայացնել Տիրոջ Սուրբ Եկեղեցին, որը կարեւոր բաղադրիչն է Աստծո հետ միության։ Քահանայապետն իր նամակում գրում է.

«Կանոնավոր կերպով Սուրբ Գիրք ընթերցելը, Սուրբ Հաղորդություն ընդունելը մեզ համար հնարավոր են դարձնում ինքներս մեզ ընդունել որպես միմյանց անդամներ։ Որպես քրիստոնյաներ, մենք մեկ ժողովուրդ ենք, որ

անցնում ենք մեր ուխտի ճանապարհը պատմության ընթացքում, եւ Տերը ներկա է մեր մեջ եւ սնում է մեզ», Aperuit illis։

Աստծո Խոսքը իմանալը եւ մշտապես ուսումնասիրելը նաեւ մեր փրկության միակ ճանապարհն է եւ շատ կարեւոր է, որ մեր իմացածը, մեր հասկացածը կիսենք նաեւ ուրիշների հետ, Ավետարանացումը յուրաքանչյուր քրիստոնյայի պարտականությունն է, բարի լուրով հարկ է ուրախացնել եւ փրկության հնարավորություն տալ բոլորին։

Ինչպես լսեցինք այսօրվա ավետարանում, սամարացիները, որ նախապես այդ կնոջից լսել էին Հիսուսի մասին, ապա իրենք էին շփվել Նրա հետ, կնոջն ասում են.

«...մենք ինքներս լսեցինք եւ գիտենք, որ նա՛ է ճշմարտապես փրկիչն աշխարհի», Հվհ. 4, 42։

Սուրբ Պողոսը իր սիրելի աշակերտ Տիմոթեոսին հիշեցնում է Աստվածաշնչի փրկարար զորության մասին. «...մանկուց գիտես Սուրբ Գրքերը, որոնք կարող են քեզ իմաստուն դարձնել՝ փրկության համար, այն հավատի միջոցով, որ Քրիստոս Հիսուսով է։ Սուրբ Գրքի ամեն մի գիրք աստվածաշունչ է եւ օգտակար՝ ուսուցանելու, հանդիմանելու, ուղղելու եւ արդարության մեջ խրատելու համար, որպեսզի Աստծու մարդը լինի կատարյալ եւ պատրաստ՝ ամեն տեսակ բարի գործերի», Ա Տիմ. 3, 16։

Աստծո Խոսքը ունի կենդանի ներգործություն՝ նրա մեջ, ով լսում է սրտի եւ մտքի բացվածությամբ, նախապես զղջման ճանապարհ անցնելով, որպես մաքուր եւ պարարտ հող, որ պատրաստ է ընդունելու Խոսքի սերմ եւ ծլարձակելու։ Աստծո Խոսքը մեռած տառ չէ, այլ կենդանի է եւ կյանք է տալիս մարդու հոգուն, սկսում է ներսից սրբացնել նրան, մղել դեպի Աստված, սեր է բորբոքում Աստծո եւ սրբության հանդեպ եւ մարքում մարդու ներսի պղծությունները, մեղքերը, զորացնում է կամքը եւ կառուցում «ներքին մարդուն», ճիշտ ինչպես կառուցեց աշխարհը եւ ստեղծեց մարդուն։ Եվ Աստծո խոսքը չլսելու եւ չկատարելու համար մարդը ոչ մի արդարացում չի կարող ունենալ։

Մովսեսն իր վերջին պատգամում իսրայելիցներին ասաց հետեւյալը.

«Այն պատվիրանները, որոնք ես այսօր հաղորդում եմ քեզ, ո՛չ դժվար են, ո՛չ էլ քեզ անմատչելի։ Դրանք ոչ երկնքում են, որ ասես. «Մեզնից ո՞վ կելնի երկինք, որ վերցնի դրանք, որ լսենք եւ կատարենք», ոչ էլ ծովի մյուս ափին, որ ասես. «Ո՞վ պիտի անցնի ծովի մյուս կողմը, որ մեզ համար վերցնի դրանք, մեզ համար կարդա եւ մենք կատարենք»։

Քեզ չափազանց մոտիկ է այդ խոսքը. քո բերանում եւ քո սրտում է, եւ քեզանից է կախված դա կատարելը». Բ Օր. 30, 11-14։ Ամեն»։

Աղոթք՝ Աստծո խոսքի տարածման համար

Սիրելի՛ Հիսուս, քո Սուրբը Հաղորդության եւ Սուրբ Ավետարանիդ առջեւ ծունկի ենք եկել՝ միասնաբար աղոթելու Աստծո Խոսքի առավել տարածման եւ Ավետարանիդ՝ մինչեւ աշխարհի ծայրերը քարոզության համար, քո սուրբ պատվիրանիդ համաձայն։

Տու՛ր մեզ շնորհդ՝ առավել շատ սիրելու Աստվածային Խոսքդ, գերիմաստությունդ, յուրաքանչյուր բառդ, որ ներշնչել ես գրել Աստվածաշունչ մատյանի էջերում։

Տու՛ր մեզ աստվածային շնորհդ՝ առավել խորությամբ հասկանալու իմաստը աստվածային

խոսքերիդ, անհատնում հարստությունները յուրաքանչյուր աստվածաշունչ բառիդ եւ գրքիդ։

Տու՛ր մեզ աստվածային շնորհդ՝ մեր սրտերում զարգացնելու կամք եւ կարգապահություն՝ ամեն օր ընթերցելու Աստվածաշունչը, մանավանդ, Քո Սուրբ Ավետարանները, ընթերցելու աղոթքով, բացված սրտերով, զղջացած հոգով եւ լուսավորվելու պատրաստ մտքերով՝ դառնալով պարարտ հող՝ քո խոսքի սերմն ընդունելու եւ պտղաբերելու ձգտումով։

Տու՛ր մեզ աստվածային շնորհդ՝ Աստվածաշունչը դարձնելու մեր ամենասիրելի գիրքը, մեր ամենաշատ ընթերցվող գիրքը, մեր ընտանիքների ամենաթանկարժեք գանձը, որից կախված է մեր կյանքը, մեր երջանկությունը, մեր խաղաղությունը, մեր փրկությունը չարի հարձակումներից, մեր բուժումները՝ ամեն տեսակ հոգեկան եւ մարմնավոր հիվանդություններից, հուսահատություններից եւ հոռետեսությունից։

Տու՛ր մեզ շնորհ՝ Քո Աստվածային Խոսքի մեջ գտնելու մեր կյանքի հույսը, ամենօրյա պայքարի համար ուժը, կենսախնդ գույները՝ կենցաղի միօրինակ գործության մեջ, ճշմարիտ ուղեցույցը՝ դժվարին իրավիճակներում, իմաստուն խորհուրդը, երբ ոչ ոք չկա, որ օգնի, ուղեկից եւ միշտ հավատարիմ ընկերը, որ երբեք չի դավաճանում եւ միշտ պատրաստ է ավելին անելու, եթե սիրենք իրեն եւ հաճախակի դիմենք իր օգնությանը։

Սիրելի՛ Հիսուս, տու՛ր մեզ շնորհ՝ մշտապես փափագելու մասնակցել Քո Սուրբ Պատարագին եւ Սուրբ Հաղորդությանդ երկրպագությանը՝ գիտակցելով, որ Ավետարանը, որ ընթերցվում է, Դու ես՝ կենարար Խոսքդ, Պատարագիչը Դու ես՝ Ինքնազոհաբերվող Արարիչ Խոսքդ, Պատարագվողը Դու ես՝ Աստծո մարմնացյալ Խոսքդ, Պատարագը Դու ես՝ Քո Սուրբ Մարմնով եւ Արյամբ, Աստվածային Անձովդ եւ մարդացյալ Խոսքովդ։ Տու՛ր շնորհ՝ հասկանալու, որ մեզ որպես սրբարար կերակուր մատուցվողը Դու ես՝ մեր փրկության համար եւ մեզ Քո Խոսքով միավորողը, Քո Սուրբ Հաղորդությամբ մեզ մեկ հաց մեկ մարմին դարձնողը Դու ես՝ մեզ հետ հաղորդվող Իմաստությունդ։

Սիրելի՛ Փրկիչ, վերջապես տու՛ր մեզ շնորհ՝ Քո Աստվածային Խոսքիդ հանդեպ մեր սերը եւ մեր տկար գիտելիքները, որ քաղում ենք Աստվածաշնչի աղբյուրից, կիսելու մեր եղբայրների եւ քույրերի հետ, ինչպես դու ես կիսում Քո Սուրբ Մարմինն ու Արյունը բոլորի հետ, ովքեր գալիս են դեպի Քեզ։

Ո՛վ Մայր Աստվածային Խոսքի, քո մայրական քնքշությամբ եւ խոհեմությամբ սովորեցրու՛ մեզ ընդունել ու վստահել Քո Սուրբ Որդու խոսքին եւ խոստումներին, ինչպես Դու վստահեցիր. Ամեն։

Տ. Հովսեփ Գալստյան

«Փոփոխության առաջամարտիկները».

Բավրայի երիտասարդները մասնակցեցին Աչոցքի երիտասարդների համար կազմակերպված 2-րդ սեմինարին

2020թ. հունվարի 27-ին Գյումրիի Լոֆթ մշակութային-ժամանցային կենտրոնում կազմակերպեցինք 2-րդ սեմինարը՝ Աչոցքի հայ կաթողիկէ չորս համայնքների՝ Մեծ Սեպասարի, Բավրայի, Ղազանչիի եւ Սիզավետի 35 պատանիների եւ երիտասարդների համար։ Որպես սեմինարի խորագիր ընտրեցինք «Երիտասարդները՝ փոփոխությունների առաջամարտիկներ», որը տրամաբանական շարունակությունն է նախորդ սեմինարի, որ

կոչվում էր «Երիտասարդները՝ հույսի առաջամարտիկներ»։ Սեմինարի կազմակերպման նպատակը երիտասարդներին օգնելն է՝ լինելու իրենց համայնքներում դրական փոփոխությունների նախաձեռնողներ, գաղափարներ գեներացնողներ, խնդիրների լուծումների նոր ճանապարհների որոնողներ, նոր զարգացողական ծրագրեր մշակողներ եւ իրականացնողներ՝ ամենատարբեր ոլորտներում՝ առաջնորդվելով Ավետարանի սկզբունքներով եւ հավատքով։

Սեմինարը վարելու համար հրավիրել էինք նաեւ Քրիստինե Մխիթարյանին, որ երիտասարդների հետ աշխատանքի մեծ փորձ ունի եւ Հայկական Կարիտասի «Ծխական հասարակական խորհուրդներ», «Շահերի պաշտպանություն» ծրագրերի ղեկավարն է։

Նախ այս սեմինարների կազմակերպման իմ տեսլականի եւ հետագա անելիքների մասին խոսեցի հետեւյալը.

«Սիրելինե՛ր, այս երկրորդ սեմինարը շարունակում է նախորդի թեման։ Տրամաբանությունն հետեւյալն է. դուք կոչված եք լինելու եւ արդեն իսկ հանդիսանում եք Եկեղեցու եւ ձեր համայնքի հույսը, եւ որպես այդպիսին, կոչված եք լինելու եւ արդեն իսկ սկսել եք լինել Եկեղեցում եւ համայնքում դրական փոփոխությունների կրողները կամ առաջամարտիկները։ Նախ ի՞նչ է նշանակում այս բառը՝ «առաջամարտիկներ». առաջամարտիկներն այն զինվորներն են, ովքեր մարտի դաշտում գնում են զորքի առջեւից եւ, ըստ էության, առաջնորդում են բանակը։ Դուք պետք է լինեք այդպիսի զինվորների նման՝ որպես կենդանի հույս Եկեղեցու համար եւ համայնքի համար, ինչպես որ ձեր ընտանիքների հույսն եք։

Նախորդ սեմինարի ժամանակ խոսեցինք ձեր մեջ թաքնված եւ արդեն իսկ դրսեւորվող հսկայական ներուժի, հավատքի, լավատեսության, ապագայի հանդեպ վստահության մասին։ Այդ վստահությունը բխում է ձեր հավատքից, որ ապրում եք միասին՝ Տեր Հիսուս Քրիստոսի հետ միության մեջ, գործադրում եք մեր երիտասարդական միության տարատեսակ ձեռնարկներում։

Հավատքի կենդանի ապրումը, զարգացումը հնարավոր է՝ մշտապես պահելով երիտասարդական ավյունը, խանդավառությունը, նոր բարձունքներ նվաճելու կամքը, փափագը, ապագայի վառ երազանքները, գաղափարներ, որոնք թվում են շատ դժվար իրագործելու համար, բայց շարունակ ոգեշնչում եւ կանչում են դեպի նոր նվաճումներ, զարգացում, կատարելագործում։ Այս ամենը կախված է ձեզանից եւ ձեր առջեւում է, սպասում է ձեզ, թե երբ եք սկսելու ձեր պայքարը, թե երբ եք վճռականորեն մարտի բռվելու ձեր իսկ թուլությունների դեմ, ձեր հուսահատությունների դեմ, ձեր եւ ձեր ծնողների, ընկերների անհույս վատատեսության դեմ, երբեմն նույնիսկ ոչինչ չանելու եւ ինքնահոսի մատնվելու վիճակի դեմ, որ համակում է շատ երիտասարդների եւ մեծահասակների։ Դուք պետք է մարդկանց հու՛յս ներշնչեք ձեր եռանդով եւ ձեր կոնկրետ գործերով, ծրագրերով, համայնքի կյանքում բերելով դրական փոփոխություններ, որոնք բոլորի համար անվիճելի են եւ հուսադրող, որոնք կարող են փաստել բոլորին, որ ամենաանհույս պայմաններում նույնիսկ հնարավոր է եւ պե՛տք է աշխատել՝ ելքեր գտնելու համար, եղածը ավելի լավը դարձնելու, կատարելագործելու համար, Աստծո առաջ ամեն ժամ ավելին լինելու համար, ավելի հոգեւոր, ավելի սուրբ, ավելի արդար լինելու համար, ավելի կիրթ եւ բարձրաճաշակ լինելու համար, ավելի բարեկեցիկ ապրելու համար։

Ուրեմն, փոփոխությունների սկիզբը ձեր մեջ եղած հույսն է, որ հիմնված է ձեր հավատքի եւ Աստծո հանդեպ ձեր սիրո վրա։ Պետրոս առաքյալն իր նամակում ասում է հետեւյալը.

«Մշտապես պատրաստ եղեք պատասխան տալու ամեն մարդու, որ կհարցնի ձեր մեջ եղած հույսի մասին», Ա Պտ. 3, 15։

Հույսի մասին պատասխան տալ պետք է մեր հավատքի եւ սիրո վկայությամբ, որ պետք է արտահայտվի մեր գործերով։ Այդ գործերը պարտադիր չէ, որ լինեն մեծ ծրագրեր, այլ պետք է սկսվեն փոքրիկ քայլերից, որոնք սակայն, արվում են մեծ սիրով, ինչպես ասում է Սբ. Մայր Թերեզան։ Միայն մեկ կարեւոր բան կա. այդ փոքրիկ քայլերը պետք է լինեն անընդհատ եւ միշտ առավել շատ, որակապես առավել բարձր։

Եթե հիշում եք, այս տարեսզբի հանդիպման ժամանակ ես ասացի, որ այս տարի ավելի շատ բան ենք անելու, քան՝ նախորդ տարի եւ մեր միության թերթը առավել շատ բան պետք է պատմի համայնքին ձեր մասին։ Այդ քայլերը պետք է անենք միասին, եւ հարկ է, որ ձեզանից յուրաքանչյուրը հանդես գա նոր գաղափարներով, որոնք կարող են վերաբերել եւ՛ եղած քայլերը ավելի լավը դարձնելուն եւ՛ նոր քայլեր անելուն, ծրագրեր կազմելուն եւ իրականացնելուն, անկախ նրանից՝ այդ ծրագրերն իրականացնելու հնարավորությունները այս պահին կան, թե ոչ։ Պետք է յուրաքանչյուրդ ինքներդ ձեզ պատկերացնեք որպես անընդհատ ստեղծագործող եւ երբեք կանգ չառնող ստեղծարարներ, գյուտարարներ, արվեստագետներ, ճարտարապետներ՝ բայց ոչ նեղ մասնագիտական իմաստով։ Յուրաքանչյուրդ պետք է լինեք գաղափարներ ծնող եւ զարգացնող պարարտ հող, որոնց մեջ կա կյա՛նք եւ այն միշտ խոստանում է աճել, զարգանալ՝ ճիշտ Երկնքի Արքայության սերմի նման, որն ինչպես Հիսուս ասում է, սկզբում մանանեխի հատիկի չափ է, բայց երբ աճում է, դառնում է մի մեծ ծառ, որի ճյուղերին հանգստանում են թռչունները։ այսպիսին պետք է լինի ձեր յուրաքանչյուր գաղափարը եւ ծրագիրը. նախ՝ փոքր կամ դեռեւս անորոշ, սաղմնային վիճակում, բայց երբ մտածեք յուրաքանչյուր քայլը, աշխատեք, փորձ ձեռք բերեք եւ, որ շատ կարեւոր է, աղոթեք այդ գաղափարների համար, դրանք կաճեն կդառնան իսկական ծառեր եւ շատերի համար կլինեն զարգացման, բարեկեցության, հոգեւոր մխիթարության հնարավորություններ։

Ես աղոթում եմ, որ դուք լինեք առավել ջերմեռանդ հավատքի մեջ եւ առավել ջանասեր ինքնուրույն նախաձեռնություններով հանդես

գալու եւ դրանք իրագործելու միջոցները գտնելու մեջ։ Այսպիսի հանդիպումները ձեզ կօգնեն լինել ավելի նախաձեռնող եւ գտնել հնարավորություններ։

Դավիթ թագավորը, որ նաեւ սաղմոսներ էր գրում, մի շատ ոգեւորիչ աղոթք ունի. «Տէ՛ր, Քեզնո՛վ միայն զինված պիտի վազեմ եւ իմ Աստծու շնորհիվ պիտի անցնեմ պարսպի վրայով», Բ Թգ., 22։30

Քրիստինե Մխիթարյանն իր կարեւոր նյութը երիտասարդներին ներկայացրեց հետաքրքիր բացատրություններով եւ քննարկումների միջոցով, լսելով երիտասարդների կարծիքները, նրանց առիթ տալով խորհրդածել սեփական կարողությունների, տաղանդների մասին, թե ինչպես կարող են դրանք դրսեւորել եւ ինչպես կարող են գաղափարներ հղանալ ու զարգացնել իրենց համայնքներում։ Նա շեշտեց, որ յուրաքանչյուր անձ կարող է փոփոխություններ բերել իր իրականության մեջ՝ ջանալով ոչ թե նախ փոխել իրականության պայմանները, այլ՝ նախ սեփական անձը, հաղթահարել վախերը, թերահավատությունը, սահմանել նպատակներ, երազանքներ, ոգեշնչվել ու ջանք թափել դրանք իրականություն դարձնելու համար՝ չվախենալով միջոցների սահմանափակ լինելուց։

Նա առաջարկեց երիտասարդներին մտածել «աշխարհը փոխելու 6 քայլերի մասին», դրանք են՝ 1.ոգեշնչվել, 2.լինել տեղեկացված, 3.բացահայտել սեփական տաղանդները, ուժեղ կողմերը, 4.լինել խիզախ եւ գործել՝ մանրամասն ծրագրելով ամեն մի քայլ, 5. թույլ կողմերը լրացնել ուրիշների օգնությամբ, թիմային աշխատանքով, գտնել ճիշտ մարդկային ռեսուրսներ, 6.տոնել յուրաքանչյուր փոքր հաղթանակ՝ վստահ լինելով, որ կարողացար դրական փոփոխություն բերել։

Քրիստիներից հետո Բավրայի Երիտասարդական միության անդամ Անդրանիկ Մարգարյանը, որ այս տարվա հունվարի 12-21-ը Հայկական Կարիտասի կողմից հրավիրվել էլ Ֆրանսիայում մասնակցելու համայնքներում սոցիալական ծրագրերի փորձի փոխանակման մի ծրագրի, պատմեց Ֆրանսիայում Կարիտասի ծրագրերի եւ գաղափարների մասին, որոնք կարող են երիտասարդներին օգնել զարգացնել իրենց գաղափարները տեղի համայնքներում։

Հանդիպումն ավարտվեց միասնական աղոթքով եւ թեման հետագա սեմինարներում զարգացնելու մասին քննարկումներով, գաղափարային նոր առաջարկներով։

Տ. Հովսեփ Գալստյան

Բավրայի երիտասարդական միության գործունեությունը ներկայացվեց Ֆրանսիայում

Բավրայի Հայ Կաթողիկէ Եկեղեցու Երիտասարդական միության անդամ Անդրանիկ Մարգարյանը, որպես հասարակական եւ հոգեւոր ակտիվություն ունեցող երիտասարդ, Հայկական Կարիտասի հրավերով, այս տարվա հունվարի 12-23-ը, Հայկական Կարիտասի աշխատակիցների հետ միասին մասնակցեց Ֆրանսիական վեց քաղաքներում անցկացված համայնքային

զարգացման ոլորտում «Փորձի փոխանակման» հատուկ ծրագրին։

Անդրանիկը Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միության անդամների հետ զրույցի ընթացքում պատմեց ծրագրի, իր տպավորությունների մասին, եւ թե ինչպես է պատրաստվում իր ձեռքբերված որոշակի փորձառությունը դնել ի նպաստ երիտասարդական միության եւ համայնքի առավել զարգացման։

Հայկական Կարիտասի խումբը ծրագրով այցելել է Փարիզ, Շարտր, Բլուա, Տիր եւ Օրլեան քաղաքները, որտեղ ծանոթացել են ֆրանսիական Կարիտասի՝ Secours Catholique-ի մի քանի ծրագրերի, մասնավորապես երիտասարդների եւ կամավորականների ներգրավվածության մասով՝ փոխադարձաբար կիսվելով սեփական փորձառությամբ։

Անդրանիկ Մարգարյանը, մասնավորապես, ներկայացրել է Բավրայում Հայ կաթողիկէ երիտասարդական միության կամավորական գործունեությունը, բարեգործական ակցիաները, ինքնակազմակերպական մեթոդները եւ համայնքային զարգացմանը նպաստելու հնարավորությունները, որոնք երիտասարդները ջանում են զարգացնել գյուղի հոգեւոր հովվի հետ միասին։ Անդրանիկը ներկայացրել է նաեւ Բավրայում Հայկական Կարիտասի իրականացրած ծրագրերը, հատկապես, «Ծխական հասարակական խորհուրդները», որի շրջանակներում իր նախաձեռնությամբ մշակվել եւ իրականացվում է պատանիների համար համակարգչային գիտելիքների դասընթաց։ Դասընթավարը Անդրանիկն է՝ կամավոր հիմունքներով։ Ներկայացրել է նաեւ անգլերենի դասավանդման կազմակերպումը։ Անդրանիկը ներկայացրել է, որ երիտասարդական միության գործունեության եւ համայնքային զարգացման ծրագրերի հետագա ընդլայնումը հնարավոր է համարում՝ Ավետարանի եւ Եկեղեցու սոցիալական ուսմունքի սկզբունքների հիման վրա, երիտասարդների հավատքի եւ խանդավառության շնորհիվ։

Օրլեանում քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների հետ միասին քննարկվել են Ֆրանսիայի եւ Հայաստանի մշակութային որոշ առանձնահատկություններ, նմանություններն ու տարբերությունները, երկուստեք ներկայացվել են իրենց համայնքներում իրականացրած ծրագրերը։ Հանդիպումների ընթացքում որոշվել է գտնել երկու երկրների երիտասարդական կազմակերպությունների միջեւ կապի ամրապնդման միջոցներ, վեր հանել հնարավոր խոչնդոտներն ու փորձել գտնել դրանց լուծումները։

Տուր քաղաքում Հայկական Կարիտասի խումբը հանդիպումներ է ունեցել Ֆրանսիացի կամավորականների հետ, որոնք հիմնականում եղել են տարեցներ։ Հարցին, թե ինչու են երիտասարդ կամավորները քիչ, Ֆրանսիացի գործընկերները պարզաբանել են, որ երիտասարդների զբաղվածությունը խիտ է, այդ պատճառով էլ նրանց թիվը համեմատաբար սակավ է։ Անդրանիկի համար հետաքրքիր

բացահայտում էր այն, որ Տուր քաղաքում կա «Կամավորականների ասոցիացիա», որտեղ կազմակերպութիւնները դիմում են կամավորներ գտնելու հարցով։

Այցելութիւններ են եղել նաեւ միայնակ կանանց հոգածութեան հաստատութիւններ, որտեղ Հայկական Կարիտասի խումբը ներկայացրել է Հայաստանի մասին։ Հանդիպել են տեղի երիտասարդների հետ, որոնք մեծ մասամբ եղել են ներգաղթյալներ։ Հանդիպումն անցել է շատ լավ, երիտասարդ կամավորները ցուցաբերել են մեծ ակտիվութիւն, սակայն Անդրանիկի տպավորութեամբ, նրանց դեռ չունեն հստակ գործունեութեան ծրագիր, եւ իրենց հանդիպումների հիմնական նպատակը դեռեւս ժամանցն է։ Ներգաղթյալներին եւ ֆրասիացի երիտասարդներին մեծապես հետաքրքրել է հայ երիտասարդների նախաձեռնութիւնները ու միասնական կամավորական աշխատանքը։ Անդրանիկը եւ խմբի մյուս անդամները կիսվել են իրենց փորձառութեամբ։

Գլխավոր սեմինարը անցկացվել է Բլուա քաղաքում։ Խմբային աշխատանքի միջոցով երկուստեք ներկայացրել են իրենց համայնքներում իրականացրած ծրագրերը, իսկ հետազոտող խումբը արտահայտել է վերջնական կարծիքը՝ արդյունքում բարձր գնահատական տալով Հայաստանի Բավրա համայնքում իրականացված ծրագրերին՝ դրանք համարելով առավել հետաքրքիր եւ արդյունավետ։

Փարիզը եղել է խմբի ճամփորդութեան վերջին հանգրվանը։ Այստեղ էլ հենց տեսել է այն, ինչն ամենաշատն է տպավորել Անդրանիկին.

«Տեսանք մի բան ինչը մեզ եւ ուրախացրեց եւ հաճելիորեն զարմացրեց։ Լատինածես կաթողիկէ եկեղեցիներից մեկում կար այսպես կոչված «Հայկական անկյուն», որը ստեղծվել էր Ֆրանսիայում բնակվող հայերի կողմից եւ պատմում էր հայերի եւ Հայաստանի մասին։ Համոզվեցինք, որ աշխարհի ցանկացած անկյունում էլ կգտնես մի փոքրիկ Հայաստան։

Փարիզի դեպարտամենտում կատարվել է ծրագրի ընդհանուր քննարկում, որի ժամանակ հայ եւ ֆրանսիացի կամավորականները փոխանակվել են իրենց գաղափարներով ու փորձով, «խաղ մեթոդ»-ի միջոցով առանձնացրել իրենց համար փորձի փոխանակման այս ծրագրի կարեւորութիւնը, դժվարութիւնները եւ «ծարավը»՝ հույս հայտնելով, որ նմանատիպ ծրագրերը շարունակական բնույթ կկրեն։

Զրույցի վերջում Անդրանիկը հավելեց, որ այս ուղեւորութիւնը իր համար հրաշալի հնարավորութիւն էր՝ նոր գաղափարներով զինվելու, իր մասնագիտական բնագավառում՝ սոցիալական աշխատանքում, երեխաների հետ եւ երիտասարդական միութեան մեջ աշխատանքում քայլ առաջ կատարելու, նոր ծանոթութիւնների, եւ իր համար նոր մշակույթի բացահայտման համար՝ հուսալով, որ կրկին կունենա նմանատիպ միջոցառումների մասնակից դառնալու առիթ՝ արդեն Հայաստանում՝ «Ամառային ճամբար»-ի շրջանակներում, որը մի գեղեցիկ գաղափար է, որ մտադիր է զարգացնել Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միութեան, Հայկական Կարիտասի եւ ֆրանսիացի գործընկերների հետ միասին։

Նիկոլ Մարգարյան

Սուրբ Սարգսի տոնը եւ երիտասարդների աղոթքները

Փետրվարի 8-ին Հայ Կաթողիկէ Եկեղեցին տոնեց Սուրբ Սարգսի հիշատակութեան տոնը։ Փետրվարի 8-ին ձնաբքի պատճառով մեր նախատեսած երեկոյան աղոթքը չկարողացանք կատարել, փոխարենը մեր ծրագիրն իրականացրեցինք կիրակի՝ փետրվարի 9-ին։ Սուրբ Պատարագից հետո երիտասարդների հետ

միասին խնդրեցինք Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի եւ տասնչորս զինակիցների բարեխոսությունը, աղոթեցինք նաեւ աղոթքներ, որոնք երիտասարդներն իրենք էին գրել՝ իմ խնդրանքով։ Ահա նրանց այնքա՜ն հուզիչ եւ գեղեցիկ աղոթքները.

Անահիտ

«Հա՜յր մեր, շնորհակալ եմ քեզանից ամեն վայրկյան՝ կյանքի, ամեն հաջողության ու ամեն փորձառության համար։ Քո Սուրբ աջով թող աշխարհը ծածկվի խաղաղության հաստ շերտով, թող բոլոր մանուկների դեմքերին ժպիտ լինի, բոլոր մայրերի աչքերը չոր լինեն։ Տե՛ր Աստված, անօթեւանին տու՛ն տուր, ծարավին ջու՛ր տուր, հիվանդին՝ առողջություն։ Տե՛ր, օգնիր բոլորին իրենց երազանքներին ու նպատակներին հասնել։ Մարդկանց սրտերը լցրու՛ սիրով ու վստահությամբ միմյանց հանդեպ։ Ու թող բոլորին ուժ ու զորություն տվողը լինի նրանց անսահման հավատն առ Աստված։ Ամեն»։

Վեներա

Տե՛ր իմ, օգնիր ինձ հասկանալ, որ Դու ես միակը կատարյալների մեջ, Դու ես ամենաբարձրն ու ամենակարողը, օգնիր հասկանալ, որ Դու ես ճշմարիտ Աստված, որ առանց Քեզ, առանց Քո օգնության ես ոչինչ եմ Ամրացրու՛ միտքս ու հոգիս, որ կարողանամ ճշմարիտ ուղղով հասնել Քեզ ու Երկնային արքայությանը, օգնի՛ր, որ զերծ մնամ մեղքի եւ գայթակղության բոլոր առիթներից։ Տեր, Քո առաջ ընկած աղաչում եմ Քեզ՝ ների՛ր հանցավորիս, քանզի անթիվ են մեղքերս, քանզի չկա ոչ ոք մեղավոր ինձ պես, ոչ ոք՝ ամբարիշտ, ոչ ոք՝ անօրեն, ես ինքս եմ միայն եւ ուրիշ ոչ ոք։ Ո՛վ Ամենակալ, շնորհակալ եմ Քեզ, շնորհակալ եմ ամեն ապրած վայրկյանիս համար, շնորհակալ եմ, որ ինձ հետ ես եւ իմ կողքին ցանկացած պահի։ Փա՛ռք Քեզ, Քո Որդուն եւ Սուրբ Հոգուն։ Ամէն։

Տիրուհի

«Աստված իմ, երկրպագու՛մ եմ քեզ, շնորհակալ եմ քեզանից՝ այն բոլոր բարիքների համար, որ պարգեւել ես ինձ։ Սիրու՛մ եմ քեզ ամբողջ սրտով։ Ցանկանում եմ եւ փորձում եմ մեղքի բոլոր առիթներից հեռու մնալ։ Աստված իմ, խնդրու՛մ եմ քեզանից՝ ուժ կամքիս եւ լույս՝ մտքիս համար, որպեսզի անեմ այն, ինչ որ Քեզ է հաճելի եւ հեռու մնամ այն բաներից, որոնք կարող են Քեզ վշտացնել։ Դու եղի՛ր իմ օրինակը, որպեսզի Քեզ հետեւելով՝ լինեմ ազնիվ եւ բարի, աշխատասեր, ու մարդասեր։ Ազատի՛ր ինձ չարից, անիրավ ու անօրեն մարդկանցից։ Հեռու մի մնա ինձնից, Աստվա՛ծ իմ։ Եվ շուտ օգնության հասի՛ր ինձ, երբ քո կարիքը շատ ունենամ։ Ես հույս չեմ կորցնի, քանզի միշտ Քո վրա է հույս։ Ամեն»։

Ֆրիդա

Երկրպագելի՛ եւ սիրելի՛ Հիսուս, ես քո կարիքը շատ ունեմ։ Փա՛ռք քեզ, որ իմ եւ բոլորիս մեղքերի համար խաչվեցիր եւ մահացար։ Ես խոստովանում եւ զղջում եմ՝ իմ գործած բոլոր մեղքերի համար։ Խնդրում եմ քեզ, որ ներես մեղավորիս եւ հեռու պահել դժոխքի կրակներից։ Ես մասնավորապես պիտի ջանամ այսօր մեղքի մեջ չընկնել եւ հեռու մնալ վատ սովորություններից՝ մանավանդ այն, որը ինձ համար սովորություն է դարձել։ Եվ ինքս կփորձեմ այսօրվանից ուղղել ինձ։ Աղոթում եմ Քեզ, Տե՛ր եւ խնդրում, որ խաղաղություն լինի աշխարհում, առողջություն տու՛ր բոլոր հիվանդ երեխաներին եւ ծերերին։ Մխիթարի՛ր հուսահատ երիտասարդներին։ Լուսավորիր եւ հանգստություն պարգեւի՛ր հալածվող քրիստոնյաներին եւ թող Քո մշտնջենավոր լույսը ծագի նրանց վրա, ովքեր հանուն հայրենիքի եւ Քեզ զոհվեցին։ Պահպանի՛ր քո սուրբ եւ պատվական խաչով սահմանին կանգնած մեր զինվորներին, պահպանի՛ր բոլորիս ընտանիքների երջանկությունը եւ համերաշխությունը։ Ամեն։

Տիրուհի

Սրբուհի եւ կույս Աստվածածին Մարիա՛մ՝ մայր բոլորիս եւ պաշտպան, ես ամենայն վստահությամբ քո ողորմության դիրկն եմ դիմում։ Բարեխոսի՛ր մեղավորներիս համար եւ մոլորությունից դուրս հանի՛ր եւ ցույց տու՛ր ճիշտ ճանապարհը։ Մխիթարի՛ր վշտացյալներին, նեղության պահերին պաշտպանի՛ր։ Դեռ ոչ ոք չի եղել, որ խնդրի քո բարեխոսությունը եւ նրա խնդրանքը լսելի չլինի։ Ես էլ այդ վստահությամբ քաջալերված՝ դիմում եմ քեզ, Կույս Մարիա՛մ։ Մի՛ անտեսիր աղաչանքս, լսի՛ր գթությամբ եւ կատարիր։ Ամեն։

Վահան Տերյանին նվիրված ցերեկույթ



Փետրվարի 9-ին, Սուրբ Պատարագից եւ աղոթքներից հետո երիտասարդական միության սրահում կազմակերպեցինք փոքրիկ գրական ցերեկույթ՝ նվիրված Վահան Տերյանին։ Փետվարի 9-ը Տերյանի ծննդյան օրն է, այս տարի լրանում է Տերյանի ծննդյան 135 ամյակը եւ մահվան 100 ամյա տարելիցը։ Մեր մշակույթի ականավոր դեմքերին ճանաչելը եւ պատվելը երիտասարդների զարգացման, աշխարհայացքի եւ ճաշակի ձեւավորման կարեւոր գործոններից է, որ պետք է ընթանա հոգեւոր եւ հասարակական զարգացմանը զուգահեռ։ Ուստի, երիտասարդական միությունը մտադիր է մշտապես կազմակերպել այսպիսի փոքրիկ գրական միջոցառումներ՝ աղոթքներից հետո։

Երիտասարդները՝ Տիրուհին, Ֆրիդան, Կատյան, Անահիտը, Վեներան եւ Սոսը, մեծ հուզականությամբ ընթերցեցին Տերյանի բանաստեղծությունները, հատկապես, «Երկիր Նաիրի» շարքից, Տիրուհին ներկայացրեց նաեւ Տերյանի կենսագրությունը, ապա զրուցեցինք տաք թեյի, սուրճի եւ կարկանդակի սեղանի շուրջ։

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի,
Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ
Պատել, պայծառ Նաիրի։
Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսեղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք
Արքայական քո լեզուն։
Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եվ խոցում է, եւ այրում,
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,
Թե՞ վերքերն իմ հրահրուն։
Ահով ահա կանչում եմ քեզ
Ցոլա, ցնորք Նաիրի՛, —
Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի…

Վ. Տերյան, 1913-1916։

«Կանթեղ» թերթը ներկայացնում է Բավրայի հայ կաթողիկէ երիտասարդական միութեան գործունեությունը, ինչպես նաեւ այլ տարաբնույթ հոգեւոր նյութեր։ Երիտասարդական միությունը, որպես կանոնավոր գործունեություն իրականացնող կառույց, կազմավորվել է 2018թ. եւ արդյունքն է դյուղի հայ կաթողիկէ հոգեւոր հովվի եւ երիտասարդների միասնական ջանքերի. նպատակն է՝ ծառայել Տեր Հիսուս Քրիստոսի Կաթողիկէ՝ Ընդհանրական Սուրբ Եկեղեցուն եւ տեղի համայնքին, հայ հասարակությանը։ Բավրայի երիտասարդական միությունն անբաժանելի մասն է Հայ Կաթողիկէ Երիտասարդաց միության։

Թերթի խմբագիր՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

Թերթի կազմության աշխատանքին իրենց նպաստը բերեցին՝

Նիկոլ Մարգարյանը,

Անդրանիկ Մարգարյանը,

Անի Ցոլակյանը,

Հրանուշ Սարգսյանը

Հովանավորներ՝

Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի Հայ Կաթողիկէ Առաջնորդարան,

Հայկական Կարիտաս

Աղոթքի եւ գործունեության միությամբ՝ Հայ Կաթողիկէ Երիտասարդաց

միության հետ

Փետրվար, 2020թ.